պահեստներում, այլ անմիջապես տվյալ վայրից գանձում էին թիուլդարներն ու համհասալեդարները կամ նրանց գործակալները։

Հրապարակվող ֆերմաններով, որոնք ուղղված էին տվյալ գյուղի կամ մի քանի գյուղերի համայնքներին (ջամաաթ), կարգադրվում էր նույն հրովարտակում նշված հարկային ցուցակների համեմատ՝ հասանելիք հարկերը վճարել այդ հրովարտակը ստացողին կամ նրա գործակալներին։ Սովորաբար թե բնամթերքով և թե՛ կանխիկ դրամով ստացվող հարկերը ամբողջ մանրամասնությամբ գրված էին լինում, իսկ հաճախ էլ հիշատակվում էին միայն դրանց դրամական համարժեքները։ Այսպես, օրինակ, Թուման-ե Նախչևանի Սիսաջանի (Սիսիան) մահալի Դաստակերտ գյուղը, որը 1682 թ. որպես թիուլ տրված է եղել Բորչալուի հաքիմին, պարտավոր էր ամեն տարի իր թիուլդարին վճարել 54.909 դինար, որից 15.009 դինարը ի հաշիվ մալուջհաթի (հացահատիկ և այլ մթերքներ), իսկ 39.900 դինարը ի հաշիվ ջիգիայի (կանխիկ դրամով)[8]*։ Գյոգչյա-Դանգիզի մահալում որպես թիուլ և համհասալե վրաց ազնվականներից Ջալ-բեկին տրված Հասանքյանդի և Կարմունջ գյուղերի համայնքներից ստացվող հարկերի ընդհանուր դրամական համարժեքը կազմում էր 88.450 դինար*[9]*։ 1704 թ. Վաղարշապատ և Քյուլթափա գյուղերի համայնքների միջև կազմված մի արձանագրությունից պարզվում է, որ Քյուլթափա դիվանի գյուղը բավական ժամանակ որպես համհասալե տրված է եղել Ղալբալի Թաթարլու-Այրումլուի որդի հաջի Մուհամմադին ի դիմաց 25000 դինար տարեկան ռոճիկի*[10]*։ XVII դարի սկզբում Երևանի կամ Չուխուր-Սաադի բեկլարբեկիության սահմաններում դիվանի գյուղերից թիուլներ էր ստացել և սահմանապահ ծառայություն էր կատարում թուրքերի կողմն անցած Կաղզվանի հաքիմ Սուլթան Ալիկուլի Սաադլուի որդին՝ Մեհդիկուլի բեկը, որը 1606 թ. լքել էր հորը և նորից անցել կըզըլբաշների կողմը*[11]*։*

Անհրաժեշտ է նշել, որ XVII դարում տրված թիուլներից ոչ բոլորը կարելի է դիտել որպես ժամանակավոր հողատիրության հատուկ ձև։ Գոյություն ունեցող թիուլդարական ֆերմանների մեծ մասը մեզ բերում է այն համոզման, որ XVII դարում թիուլ տրվում էին ոչ միայն այս կամ այն դիվանի գյուղի ողջ եկամուտը, այլ նաև մուլքային որևէ գյուղից կամ մի քանի գյուղերից գանձվող ողջ պետական հարկերը կամ նրանց մի մասը։ Որպես թիուլ և համհասալե տրըվում էին նաև այլ եկամտաբեր օբյեկտներից ստացվող հարկերը (վանքեր, հանքեր, արհեստավորական համքարություններ, առևտրական ձեռնարկություններ և այլն)։ «Թիուլը Սեֆյան Իրանում,—գրում է Ի. Պ. Պետրուշևսկին,—նշանակում էր հողային հարկի (մալուջհաթ) մի մասի, երբեմն էլ այլ տուրքերի, բայց ոչ հողի և այդ հողի վրա բնակվող հարկատու բնակչության (ռայաթ), պարգևումը ծառայության մեջ գտնվող մարդկանց՝ որպես ծառայության վարձ, հողային այնպիսի հարկեր և տուրքեր, որոնք մինչ այդ որոշ-

8 ***Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 2 ա, վավ. 101։***

9 მაკარ ხუბუა, *էջ **105—106**։*

10 ***Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 214։***

11 تاریخ عالم‌آرای عباسی، جلد دوم، ص. ۷۴۳ فراخور حال مواجب وتیول شفقت شد که در تابین بیگلربیگی چخورسعد بخدمات سرحد قیام نماید